

**«ԱԼՄԱՍ» ԲԲԸ  
2010Թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
(ՏԱՐԵԿԱՆ)**

**ԵՐԵՎԱՆ 2010թ.**

## ԿԱՌԱՎԱՐՍԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ

- 1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է ընկերությունը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել ընկերության ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք ընկերության կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը ավաստային գործիքների արտադրությունն է: Գրանցից են քար կտրող, հղկող, ապակի կտրող գործիքները: Մանրածախ գներով հաշվարկի դեպքում 2010 թ -ի ընթացքում արտադրվել է 83 411 000 դրամի արտադրանք: Արտադրության հումքը (մետաղ, օլոֆ, պղինձ և այլն) ընկերությունը ձեռք է բերում Ռուսաստանի Դաշնությունից և Չինաստանից: Հաշվետու տարում Չինաստանից որպես հումք ձեռք է բերվել ավաստափոշի 2 282 690 դրամի, իսկ Ռուսաստանից ներմուծվել է 1 145 578 դրամի կարծր համաձուլվածքային փոշի: Չինաստանից ներմուծվել է նաև 584 000 դրամի սարքվորում: Արտադրանքի վաճառքի գները 2010 թ. ընթացքում կայուն են եղել: Այդ ընթացքում իրացվել է 88 593 000 դրամի արտադրանք: Արտադրանքի իրացումը հիմնականում լինում է տեղական շուկայում, արտահանվել է 2 302 702 դրամի գործիք Ռուսաստան: Ընկերությունում առկա արտադրանքի մնացորդը 01.01.2010 թ. և 01.01.2011թ. դրությամբ բերված է աղյուսակում.

Աղյուսակ 1

### *«Այնաստ» ԲԲԸ-ում առկա արտադրանքի մնացորդը (դրամ)*

	Պահեստում	
01.01.2010 թ.	379 184 000	
01.10.2010թ.	376 577 000	

Աղյուսակ 2

### ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2010թ. ՏԱՐԵԿԱՆ

Ցուցանիշ	Հազ. դրամ
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-83411
Իրացման ծախսեր	-1083
Վարչական ծախսեր	-63181
Գործառնական գործունեությունից շահույթ	-59589
Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ	10349
2010թ. զուտ շահույթ	-50185
Հիմնական միջոցները 01.01.2011թ.	915790
Կանոնադրական կապիտալը	418 217
Գեթիտորական պարտք	18547
Կրեդիտորական պարտք	1115420

**ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2010թ..\***

<b>Ցուցանիշի անվանումը</b>	<b>01.01.2011 թ.</b>
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	-0,11
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-0,100
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-0,031
Զուտ շահույթի մարժա (NPM)	-0,566
Կապիտալի համարժեքության գործակից	0,310
Ֆինանսական կախվածության գործակից	2,225
Բացարձակ իրացվելության գործակից	0,008
Ընթացիկ իրացվելության գործակից	0,466
Ընդհանուր իրացվելության գործակից	17,043
Գեթիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	4.982
Գեթիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	73,263
Պաշարների շրջանառելիության գործակից	-0,496
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	-735,887
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	-0,149
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	-2449.6

\* Գործակիցների հաշվարկման ժամանակ միջանկյալ ժամանակաշրջանի (կիսամյակի) ցուցանիշները տարեկանացված են:

**2) Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:**

Ներկայիս համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում զարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր չէ անել: Սակայն նշենք, որ գեկույցը կազմելու պահի դրությամբ Ռուսաստանի Դաշնությունից պատվերներ չկան, իսկ տեղական պատվերները անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են: Ընկերության ղեկավարությունը լավատես է և հուսով, որ 2011 թ.-նը ընկերության համար լինելու է հաջող:

**3) Այն կարևոր դեպքերի նկարագիրը, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև գեկույցը պատրաստելու օրը: Կարևոր դեպքերը լավոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորի ներդրումային որոշումներ կայացնելիս:**

Ընկերության կարծիքով կարևոր դեպքերը բացակայում են:  
Վերջին երեք տարիների ընթացքում Ընկերությունը շահութաբաժիններ չի վճարել:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Կարեն Մանուկով	Տնօրենների խորհրդի նախագահ	Տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպման համար
Վահրամ Թեպելիկյան	Տնօրեն, տնօրենների խորհրդի անդամ	Ընթացիկ գործունեության (այդ թվում՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման) համար
Ռուբեն Ներսիսյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Մանվել Սահակյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Օլգա Գասպարյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Վարազդատ Ներսիսյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Դոնարա Սայամյան	գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար

27.04. 2011թ

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

«ԱԼՄԱՍ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Ռուբինյանց 28, հեռ. 24-30-60. ֆաքս 24-35-20

էլ. փոստ [info@almastcompany.com](mailto:info@almastcompany.com)

[sales@almastcompany.com](mailto:sales@almastcompany.com)

N 05 27.04.2011թ.

տեղաբաշխված արժեթղթերի դաս՝ հասարակ, անվանական

արժեթղթերի քանակը՝ 418217 հատ

արժեթղթերի անվանական արժեքը(արժույթը)՝ 1000 ՀՀ դրամ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթուրել հաշվետվության անբողջականությունը»:

ստորագրող անձինք՝

<u>Վ.Թեպելիկյան</u>	<u>Տնօրեն</u>	_____	<u>27.04.2011թ</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
<u>Դ. Սայանյան</u>	<u>Գլխավոր հաշվապահ</u>	_____	<u>27.04.2011թ</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են (ստորագրությունները հավաստում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման այլ իրավասություն ունեցող այլ անձի կողմից)՝

<u>Վ. Թեպելիկյան</u>	<u>Տնօրեն</u>	_____	<u>27.04.2011թ</u>
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

«27» ապրիլի 2011թ.



«ԷՆ - ԱՈՒԴԻՏ»

ՍԱՀՄԱՆԱՓՈՎ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

375002, Երևան, Թումանյան-40/28

375002, Yerevan, st. Tumanyan-40/28

Հեռ. ☎ (37410) 53-40-41, (37491) 40-80-41  
e-mail: n-audit@web.am

Աուդիտորական գործունեության  
լիցենզիա թիվ ԱԾ 007, 06.06.2002թ  
26.04.2011

### Աուդիտորական եզրակացություն

«Ալմաստ» ԲԲԸ

2010թ դեկտեմբերի 31-ի ավարտվող տարվա համար

Մեր կողմից իրականացվել է «Ալմաստ» ԲԲԸ-ի 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունների աուդիտ՝ աուդիտի ազգային ստանդարտներին համապատասխան: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների և բացահայտումների հիմքերի հետազոտում, ֆինանսական հաշվետվությունների կազմմանը կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության կողմից հաշվարկված հաշվապահական էական արժեքների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարությունը: Աուդիտը չի բացահայտում կազմակերպության ներքին վերահսկողության բոլոր թերությունները, հետևաբար նա չի արտացոլում նման բոլոր դեպքերը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մեր կողմից ընտրանքային կարգով աուդիտի է ենթարկվել կազմակերպության 2010թ. գործունեությունը հաստատող այն սկզբնական փաստաթղթերի հաշվեքննումն ու համապատասխան ձևակերպումների ճշտությունը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվությունների տվյալները: Մենք գտնում ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է տալիս հետևյալ եզրահանգման համար:

Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում չկան էական խախտումներ, ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Ալմաստ» ԲԲԸ-ի 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին ճշմարիտ և իրական պատկերը և համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Տնօրեն/Աուդիտոր  
Վարդան Նիկողոսյան

Աուդիտոր  
Նունե Ալեքսանյան

